

շատ ժամանակ նշանաբան է եղել Հայոց ազգի համար, նոյն ոգւով է նուագում և Մեսրոպ Թաղիաթեանը:

* Ի քո իջեալ տեղի

Ձաթոռ Հայրապետի

Մեր հաստատեալ ։:

Մեր նոր գրականութեան մէջ յայտնի բանաստեղծները թէպէտև առանձին երգեր չեն նուիրել Ս. Էջմիածնին, սակայն ամէնքն էլ իրենց բանաստեղծութեանց մէջ յիշատակել են Էջմիածնի, յիշենք Ալիշանի, որի «Մատիսներին մէջ Մեծ Մատիսը պարծենում է Էջմիածնի հիմնաքարեր մատակարարած լինելու համար:

Այսպէս և Ս. Շահազիզեանը իւր «Լեռնի վշտի» մէջ Ս. Էջմիածնին է համարում այն կեդրոնը, որտեղից պիտի սկսի մեր վերակենդանութիւնը: Իսկ մեր մեծ բանաստեղծը, Գամառ-Քաթիպան, վերջին շնչի հետ Ս. Էջմիածնի անունն է արտաշնչում, ցանկութիւն յայտնելով նրա հովանու տակ հանգչելու:

Մի ազգի զգացումներով ևս կարող ենք չափել նրա կենսունակութիւնը, թէ՛ նշ զգացումներ է տածում մի ազգ գէպի իւր անցեալի յիշատակներն, արտայայտում են ազգի երգիչները—բանաստեղծները, Ս. Էջմիածնի մասին մեր ազգային երգիչների արտայայտածներն առհաւատչեայ են այն մեծ գաղափարի յարատեւութեան և կենսունակութեան, որի մարմնացումն է հայ եկեղեցին և Ս. Էջմիածնի կաթողիկէն:

Ն. Բարամեան.



ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՅՈՒ ՄԵՂԵԳԻՆ

ի պատիւ Ս. Գրիգոր Լուսաւորչի:

Մեր հին գրականութեան շրջանում տարակոյտներն հետզհետէ բազմանում են, հեղինակների անձերը, ժամանակը և երկերը

սկսում են կասկածանքների ենթարկուել: Բանասէրների մի մասը շուտափոյթ է իւր եզրակացութիւններով, իսկ միւս մասը դանդաղօրէն աւանդականը գիտնականի հետ փոխանակելում:

Մատենագրութեան զտման խնդրի համար մեծ նշանակութիւն ունին բնագիրները, շատ կասկածներ, ենթագրութիւններ և եզրակացութիւններ կարող են միանգամից բարձուել ձեռագրական որևէ ընթերցանութեան օրինակով: «Արարատի» ապրիլի համարում պ. Կ. Կոստանեանցը ծանօթութիւններով պարզաբանեց Խորենացուց մի հատուած «Ս. Թէոփորոսի ծննդեան և սննդեան և վարուց» մասին, տպագրելով այդ հատուածը Ս. Էջմիածնի ձեռագրատան հ. 923, ճառընտրից: Այդ հատուածը արդէն իսկ տպագրուած էր «Սոփերք հայկականի» հատոր ԺԶ. մէջ, ¹ սակայն առանց յիշատակելու, թէ դա Մ. Խորենացուն է: Այդ փոքրիկ ձեռագրական տարբերութիւնը մեծ նշանակութիւն ունի նախ այդ հատուածի արժէքը որոշելու համար և ապա Մովսիսի «Հայոց Պատմութեան» քննադատութեան համար:

Առիթ առնելով Ս. Էջմիածնի տօնը, ահա առաջ ենք բերում մի հին մեղեդի ս. Լուսաւորչի անունով, որ թէպէտև հրատարակուած է, բայց համարուած է իբրև Գիւտ կաթողիկոսին ձօնուած, ² մինչդեռ մեր ձեռագրատան հ. 280 տաղարանի մէջ, այդ տաղը ս. Լուսաւորչին է յատկացրած: Մեր տաղարանի հնութիւնը (1394 թ.) բաւական մեծ երաշխաւորութիւն է վերնագրիս ստուգութեանը, եթէ աչքի առաջ ունենանք նաև տաղի ներքին բովանդակութիւնը, որ աւելի ս. Լուսաւորչին է յարմարում քան թէ Գիւտին: Ահա այդ մեղեդու ճշգրիտ արտատպութիւնը Ս. Էջմիածնի համար 923, ձեռագրից:

1. Սոփերքի բնագիրը բաւական խոշոր տարբերութիւններ ունի հ. 923, ձեռագրի բնագրից:

2. Տես. «Բազմավէպ» 4849. թ. 4 և «Հնոց Նորոց» եր. 59:

Մեղեղի սուրբ Լուսաորջին Մովսէս քերթողին Որեւմ. 1.

(Տ ա Ղ Ճ Խ Է .)

Ո՛վ արքայակերպ տէր քահանայապետ,
սուրբ եւ հովիւ բարի. որ յերկնայինսն նը-
մանեալ հրեշտակատեսիլ.

Երբզեմմը քեզ ըզերգաս, քեզ ըզերգաս երգե-
մըք, քեզ ըզերգաս, զերգաս երբզեմմը քեզ
ըզերգաս:

Եւ իշըրթանց քոց ըղլխեալ ջուր կենդանի
երանգ երանգ. երբընեղազան ծաղկաւք.
երբզեմմը քեզ ըզերգաս. քեզ ըզերգաս...
Վասնորոյ եւ զքառիցն ամետարանն գետը
զանուշն եւ զաօգտակարն. արբուցանելով ըզ-
պասքումըն ծարաւեաց.

Երբեմք քեզ...

Ե. Բ.



Պ Ո Ղ Ի Կ Բ Ա Տ Է Ս Ի Մ Ա Տ Ա Ն Ի Ն²
ՇՈՒՆԵՐԻ

Տանիքի վերայ նա բարձր կանգնած
նայումէր, հոգին հրծուանքով լցուած,
իրեն հպատակ շքեղ Սամուիլն:

«Հրնազանդ է ինձ այս ամէնը, տես.
Խոստովանիր, որ երջանիկ եմ ես», —
նա Եգիպտոսի ասաց արքային:

«Վայելում ես դու երկնից շընորհներ —
Ահա վաղեմի քո բաղդակիցներ

Քո զայիսոնի ուժիցն ընկճուեցան:
Բայց կայ վրիժառու մէկը տակաւին.

Եւ մինչ կենդանի է քո թշնամին,
Երջանիկ քեզ չի ասիլ իմ՝ բերան:

Եւ դեռ չէր արքան իւր խօսքն ասարտած,
Ահա Միլետից հրեշտակն ուղարկուած
Եկաւ, ամետիք բերեց իշխանին.

«Թող, տէ՛ր, բորբոքուի զոհերի ճենճեր,
Եւ դաւարագեղ զուարթ դափնիներ
Հիսուին փառաւոր պըսակ քո գլխին:

«Տիգանար արդէն ընկաւ թշնամիդ.
Հաղորդում է այս լուրն ուրախատիթ
Պոլիդորն ազնիւ, զօրավարըդ քաջ:»

Ասում է, քանում՝ նա մի սեւ անօթ, —
Եւ արինաթաթախ զըլուխը ծանօթ
Սոսկալով տեսան նրանք իրանց առաջ:

Եւ սարսուռ զգաց, նահանջեց արքան.
«Բայց մի՛ հաստար դու երջանկովեան», —
Մտահոգ ասաց իւր քարեկամին.

«Հարուստ նաւերիդ — այդ մի՛ մոռանայ —
Բաղդըն է լողում նենգ ալեաց վերայ.
Կը փշրէ՝ նոցա փոթորիկն ուժգին:»

Եւ հագիւ թէ նա իւր խօսքն ասարտեց,
Մի ուրախ զանչին նորան ընդհատեց,
Որ ծովեզերքից հասաւ թնդալով.
Ժանրացած զանծով օտար աշխարհի
Դառնում են արա երկիրն հայրենի
Նաւերն՝ իբր անտառ խիտ խիտ կայմերով:

Ապշեցաւ մընաց ու ասաց արքան.

«Յաջողում է քեզ այսօր ամէն ըսն.
Բայց ըզգուշացիր յեղյեղով բաղդից —
Ահա կրետացոց զնդեր զինաւառ
Պատրաստում են արդ վըտանգ քեզ համար.
Արդէն հեռու չեն նոքա այս ափից:»

Եւ խօսքը բերնից դեռ նոր դուրս եկած՝
Տեսան նաւերի դրօշները պարզած.

«Յաղթուի՞նք», — հազար ձայներ գոչեցին —

«Այլ եւս թշնամու չըկան արհաւիրք.

Կրետացիներին ցրուեց փոթորիկ,

Եւ հասաւ վախճան գոռ պատերազմին:»

Սարսափով լսեց հիւրն այս ամետիք.

«Ի՞նչ, պիտի քեզ ասեմ՝ երջանիկ:

Վախում եմ՝ սակայն ես կեանքիդ համար.

Աստուածոց նախանձն արեւելի է միշտ,

Եւ ուրախութիւն ոչ երբէք անվիշտ

Հողածնի բաժին տեսել է աշխարհ:

«Յաջողում էր միշտ ի՛նձ եւս ամէն ըսն.

Բոլոր գործերումս ինձ միշտ անքաժան

Հովանաւոր էր շընորհն երկնային:

Սակայն ո՞նէի ժառանգ սիրասուն —

Ես տեսայ նորա մահն անագորոյն.

Պարտքըս հատուցի իմ՝ ճակատագրին:

«Արդ ազատ լինել թէ կամիս ցաւից,

Աղաչի՛ր անմահ դու աստուածներից

1. Այս բառը ջնջուած է եւ լաւ չէ կարդացուում:

2. Der Ring des Polykrates.